

որը շարադրել է՝ Կալվանգեանը իւր մահ-  
ուանից քիչ առաջ: Այդ աղօթքը յայտնի է  
եղել՝ Կոր Կախիջևանում, սակայն ձեռազրի  
մէջ այդ տողերը գրող մեծարգոյ պ Փ. Ա.  
ցաւելով յայտնում է, որ ինքը միայն այդ  
երկու տունը զիտէ, շարունակութիւնը մո-  
ռացել է: Ահա այդ «Տէր ողորմեան»:

Աստուած հզօր, երկայնամիտ,  
Հով քաղձանաց մեր միամիտ  
չաս օգնութիւն թշուառ հային,  
չալածէ մեր չար թշնամին:

Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Եւ թէ մօտ է մեր օրհասը  
Եւ մեզ սպասէ դառն թասը,  
գոնէ տուր մեզ արիութիւն  
Վըկայ լինել մեր հաստոյն:

Տէր ողորմեան . . .

Դ.

## ՆՈՐ ՏԱՐԻ


(Նեկրասովից)

Մաշուում է կեանքըս, հալուում ամէ ցամ:  
Տըկար է միտքըս, սառչում է արին . . .  
Ես, Մայր Հայրենիք, Կիջնեմ գերեզման՝  
Զըտեսած քանցը քո ազատութիւն:

Բայց ես կուզէի - զէթ իմ օրհասին  
Դու ու կոխէիր հաստատ մանապարհ,  
Տանջանքից յետոյ դու քո առաջին  
Տեսնէիր քացուած քո օրը պայծառ:

Կ'ուզէի - զէթ այժմ հասցնէր քամին  
Հայրենի զիտից մի ճայնիկ միայն,  
Որ ինձ շրթերէր նոր սօթ ցաւազին  
Դառն արտասութիւն ծովացած արեան . . .

Յ. ՅՈՎԱՆԻՆԻ



ՆՈՐ ՏԱՐԻ \*

(Պատկեր Շիրակի գիրշական կեանքից.)

Իրիկուայ մալի ալֆի վաղդ վարժատնէն տուն  
էի գառնըմ: ցուրտ, Վարախաչու պաղ քամին  
կատած փչըմ էր ու ձևնը մերեւն քուլայ - քու-  
լայ թափրմ էր, Զեռքերս սառել փէտ էին կըտ-  
րել. ոչ կրնըմ էի գիտա բերանս տանիմ, փչիմ,  
տաքցնիմ, ոչ էլ զոլդուղիս տակը դնիմ: չունքի որ,  
մէ ձեռքս չանգէս էր՝ մէջը մենձ մայրենիս, գոսքս  
ու դաւթբներս: մէկէլ ձեռքս էլ կաղամբարս ու  
զալամս: Էդ չէշիտ, թրջուած շան գող տալով՝ հա-  
սայ տուն, գոխ դուռը բացի, մտայ շուռաքը, տան  
դուռն էլ որ չըացի՝ այն բէյին էղայ ու մնացի:  
ինչի որ մժեղներու բունը քանդես ու ընդուկ ի-  
րար անցնին ու խառնուին իրար, որը հաւկիմները  
փախցնէ, որը էս ծակէն էլնի էն ծակը մանի, էն  
չէշիտ էր մեր տնեցոց հալը. որը գունտ էր կրըմ:  
որը ձէթ էր բերըմ՝ որը լախանի թփերն էր իստը-  
կըմ ու տօլմա փաթմթըմ: Մենձ հօրողբօրս կնիկն  
էլ հտրս-ապլայիս ու պիճի-անայիս հետ փէշուուի  
տակը նստել ու գամիի գնդերը ըանըմ էր, օխաւ-  
ւըմ ու ձէթ քսըմ: ծփծփըմ: սարբըմ գամի իւ-  
ղէքը: Խանըմ-ապլան գամի խորիզն էր տրորըմ:  
հարս-խաթունը թընդիրի մոխիրն էր քաշըմ ու  
հայհայն էր ընկել վառելու: պղտի հարսն ու աղ-  
ջրկներու կէսն էլ բոլըուել էին մենձ փէշուուի չորս  
կողմն՝ լորի ու կարմօլ էին իստըկըմ: Աղջկներու  
մնացած կէսն էլ տան մէջ մօրպետութեն էին էնըմ,  
տանըմ էին, բերըմ էին, տան միջի արան ցագան  
թափած բաները ժողվում: աւլում էին, Մամոն էլ  
էրկան օխալավիմ ձեռն առած տան մէջը տընկտըն-  
կալով ման էր գալըմ: ինչը որ իրդաներու վրէն  
վերակեցուն, ու բազի բազի ճըլըմ էր. «Աղջին»,  
Զարթարի՝ գամէքուն լաւ ձէթ քսէ: որ համով  
էլուին. Գիւլի ջան, թէկ էրէք գուք էլ լորին իս-  
տըկէք, պրծէք, թնդիրը վառաւ: ու ես ինչ գիտեմ  
էս չէշիտ հաղար ու մէ բան: Սարօ ամիս էլ վեր-  
ցուել էր մէ էրկան սրդըմ: էդ սրըզի զիստուն փաթ-  
թել էր ազմ չուլ ու մուլ ընդուր վրէն էլ գարէ  
ալուր էր լցել ու տան մրով սեցած խոշտներուն  
քոթ-քոթ էր զարկըմ: Մեննակ ես էի, որ պէլա-  
ցել մնացնէլ էի ու ես ընձի ընձի զարմանըմ էի թէ  
ընչի հըմար ին էս քուլի: Մէկ էլ մտքովս անցաւ-  
թէ չէղնի ափօրս նշանել ին, ու ուրախութէնէս  
էլ շիմացայ թէ ինչ էնեմ: Գրքերս, կաղամբար -  
մաղամբարս մէ կողմ թափի ու վազի մամիս օտները  
փաթթուայ ու ըսի. «Մամի ջան, էս ընչի հըմար  
ին էս քուլի, էս ի՞նչ թագարուկ էք տեսներմ»:

\* Գ. Ճեմարանի վարչութեան թոլյտութեամբ տպագը-  
րում ենց այս պատկերը, որ գրն է Զ. դասարանի աշակերտ  
ն. Մովսէսինաց եւ կարդացի աշակերտական գրական նրե-  
կութիւն: